ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	30.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/89

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան
Մասնակից՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շինարարական աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4851-2021 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 29.03.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/613-21 գրության հիման վրա, 01.04.2021թ.-ին «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 01.04.2021թ.-ին:

01.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/89 համարի ծածկագիրը:

14.04.2021թ.-ին և 30.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2021թ.-ին:

2. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 29.03.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/613-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպված ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29 ծածկագրով ընդհանուր շինարարական աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտ ներկայացնող մասնակիցների ցանկում էր նաև «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն՝ (Հասցե՝ ՀՀ, ք.երևան քաջազնունի 1, հեռ. +374 11 550007, էլ. հասցե՝ elithilz.yahoo.com, ՀՎՀՀ՝ 04421922):

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

բացակայում էին հրավերով պահանջվող հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը և հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը որը ներկայացվելու էր՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացվեր մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, սակայն «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել պահանջվող փաստաթուղթը:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.04.2021թ.-ի գրությամբ դիմել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4851-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգի միջոցով «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում պատահաբար չի կցվել հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում բացակայում է ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը և հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հրավերի 1-ին մասի 8.10 ենթակետի համաձայն:

Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը..:

<<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են այն հիմքով, որ հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես հայտում բացակայել է հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը, սակայն հայտը մերժվել է այն հիմքով, որ դրանից հետո մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7.1 կետի՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը..:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 2.5 կետի՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հայտնում ենք, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով www.armeps.am համակարգի միջոցով գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում պատահաբար /հավանաբար տեխնիկական խնդրի պատճառով/ չի կցել հայտի ապահովման բնօրինակից սկանավորված տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես, արձանագրվել է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում բացակայում է ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը և հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը:

Եվ հանկարծ, հայտում նման անհամապատասխանություն արձանագրելու պայմաններում, նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հրավերի 1-ին մասի 8.10 ենթակետի համաձայն, այսինքն այն հիմքով, որ հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ավելին, <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են այն հիմքով, որ հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես հայտում բացակայել է հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը, սակայն հայտը մերժվել է այն հիմքով, որ դրանից հետո մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը:

Այս պարագայում փաստում ենք, որ եթե Պատվիրատուն արձանագրել է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում բացակայում է ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը և հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը, ապա գնահատող հանձնաժողովը ինչու «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին չի տրամադրել շտկելու հնարավորություն՝ հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը ներկայացնելու համար, այլ փոխարենը՝ առանց որևէ շտկում տալու հնարավորության՝ որոշել է մերժել ՍՊԸ-ի հայտը՝ հայտի ապահովման բնօրինակը չներկայացնելու հիմքով, այն դեպքում, երբ հայտով հայտի ապահովման սկանավորված տարբերկաը և ծավալաթերթ-նախահաշիվի ներկայացված չեն եղել, դեռ ավելին, համապատասխան հիմքերը ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով, Կարգի 41-րդ կետի պահանջների խախտմամբ, Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2021/89 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 19.03.2021թ. (թիվ 2 արձանագրության)՝ հիմքում դնելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 19.03.2021թ.–ին /թիվ 2 արձանագրության/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն ....04.2021թ. հիմքում դնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 19.03.2021թ.–ին և միայն ___ աշխատանքային օր անց Պատվիրատուն

որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՑ-ԼՕ-2019/233, ՍՑ-ՆԳ-2019/195 և այլն: Օրինակ՝ թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի

12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել:»

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ նախ, մասնակցին չի տրվել Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը, հայտում արձանագրվել է մի անհամապատասխանություն, սակայն հայտը մերժվել է միանգամայն այլ հիմքով, և վերջապես, չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն:

iii. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայել է հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը և հայտի ապահովման բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հայտի ապահովման երաշխիքի բնօրինակ փաստատուղթը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.10 ենթակետը, որոշել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

vi. Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.03.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/613-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4851-2021 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հայտի ապահովման երաշխիքի բնօրինակ փաստաթուղթը և հիմք ընդունելով հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.10 ենթակետը, որոշել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.03.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/613-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 19.03.2021թ.-ին՝ Մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքով, սակայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.03.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/613-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի

պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն, ըստ էության, անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4851-2021 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/89 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**